



Գայանե Հակոբյան

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՄՏԱԾԵԼԱԿԵ՛ՐՊԷ,
ՆՈՑԻԱԼՍԿԱՆ
ԹԵ՛Ն ԿԻՃԱԿ

Գայանե Հակոբյան

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊՊ Է,
ԹԵ՞ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Երևան
Հեղինակային հրատարակություն
2015

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Հ 177

Հակոբյան Գայանե
Հ 177 Աղքատությունը մտածելակերպ է, թե՛
սոցիալական վիճակ / Գ. Հակոբյան.-
Եր.: Հեղ. Հրատ., 2015. - 72 էջ:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

ISBN 978-9939-0-1613-9

© Հակոբյան Գ., 2015

ԲՈՎԱՆԴԱՌԹՅՈՒՆ

Առաջաբան 7

Աղքատությունը մտածելակերպ է,
թե սոցիալական վիճակ 11

Արդյո՞ք Աստված ուզում է, որ մարդը
հարուստ լինի 25

Ոչ միայն որոշում կայացնել, այլև
ծրագրել որոշման իրականացումը 29

Ապաշխարություն և նոր կյանք 49

Միրելի ընթերցող, բոլորի՛ն եմ խորհուրդ տալիս կարդալ այս գիրքը: Գայանե Հակոբյանին ճանաչում եմ 1991 թվականից, և ամեն ինչ որ նա արել է, միշտ եղել է գեղեցիկ ու փառավոր: Ես մտածում եմ նա այն մարդկանցից մեկն է, ով կարող էր այս գիրքը գրել: Ամիսներ առաջ, մինչ տպագրությունը, ես կարդացի այս գիրքը: Գրքի մեջ Գայանեն դրել է իր փորձառության մի փոքր մասը և աստվածաշնչյան ուսմունք:

Երբ սկսեցի ընթերցել այս գիրքը, մի շնչով ավարտեցի ու մտածեցի՝ այս խորհուրդները բոլորը լսեին ու կատարեին:

Ես մի բան գիտեմ. եթե դու արդեն կարդում ես այս խոսքերը, ուրե՛մն քո ձեռքում կա այս գիրքը...

*Հայաստանի «Կյանքի Խոսք»
եկեղեցու ավագ հովիվ,*

դր. Արթուր Միմոնյան

ԱՌ ԱԶ ԱԲ ԱՆ

Միբելի՛ ընթերցող, քեզ եմ առաջարկում այս գիրքը՝ շուրջ 23 տարի սոցիալական ծառայությունում Աստծուն և մարդկանց ծառայելուց հետո: Համարձակություն ունեմ պատասխանելու «Աղքատությունը մտածելակերպ է, թե՛ սոցիալական վիճակ» հարցին, քանի որ ծառայության բերումով շփվել եմ բազում սոցիալապես անապահով մարդկանց հետ, շուրջ երեք տարի անտուն-թափառականների հետ ապրել նույն հարկի տակ, հետազոտել տարբեր տարիքի և սեռի մարդկանց աղքատության պատճառները և եկել այն եզրակացության, որ անկախ ազգությունից, երկրի սոցիալական վիճակից՝ լինի Արգենտինայում, Անգլիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, թե Հայաստանում, մինևույն է, ամեն ինչ բխում է մարդու ներսից. մարդու կյան-

քը կառուցվում է՝ համաձայն իր իսկ բնավորության: Լինեմ ավելի անկեղծ՝ այնպիսի անտուն-թափառականներ, ինչպիսին Արգենտինայում էին կամ ԱՄՆ-ում ու Լոնդոնում, Հայաստանում չկան: Հայաստանի անտուն-թափառականները նույնիսկ բարեկիրթ են, իրենց անսահմանության աստիճան չեն մատնում կեղտին:

Միգուցե թվա, որ գրքում չափազանց շատ են աստվածաշնչյան մեջբերումները: Խնդրում եմ, որ կարդաք բոլորը, անխտիր բոլորը: Ես չեմ հիշում, թե քանի ու քանի անգամ եմ կարդացել Աստվածաշունչը, բայց այդ մեջբերումները գրելիս, Աստծուն՝ տիեզերքի Տիրակալին, մեր Երկնային Հորը և մեր կյանքի Տիրոջը, նոր, ավելի բարձր մակարդակով ճանաչեցի:

Կյանքիս ընթացքում շփվելով մեծահարուստների, աշխատանքի մեջ հաջողակների հետ, ծանայության բերումով շատ ավելի մոտիկից ճանաչելով աղքատներին՝ եզրակացություններս ու պատկերացումներս մարդ արարածի մասին շատ են, բայց այս գիրքը գրելիս ինձ իրավունք չվերապահեցի թղթին հանձնել լոկ իմ փորձառությունը, այլ մինչև համակարգչի մոտ նստելը՝ ծնկի

իջա Տիրոջ առջև և Նրանից իմաստություն ու առաջնորդություն խնդրեցի: Նրա Հոգով առաջնորդվելով եմ փորձառությունս օգտագործել և անդրադարձել եմ միայն նրան, ինչն ստացել եմ Տիրոջից:

Սիրելիս, շատ կցանկանայի, որ այս գրքում տեսնեիր քեզ սիրող, քո կյանքով մտահոգված Աստծուն, ճանաչեիր Նրա կամքը քո կյանքի ֆինանսական բնագավառի վերաբերյալ:

Գիրքը գրելիս անդրադարձել եմ Ջ. Ավանգինիի Աստծո կամքի համաձայն ֆինանսական օրհնություն ունենալու այն ուսմունքներին, որոնք կիրառելով իմ անձնական կյանքում, համոզվել եմ, որ Աստծո խոստմունքները ռեալ են յուրաքանչյուր հավատացողի համար, «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի», (Մաթևոս 24.35):

Մեր երջանկությունը ֆինանսի մեջ չէ: Աշխարհում չկա մեկը, ով միայն ֆինանսներ ունենալով՝ թեկուզ միլիարդներ, երջանիկ լինի: Աստծուց օրհնված լինել՝ չի նշանակում հարուստ լինել, միլիարդներ կամ անսահման քանակությամբ թանկարժեք զարդեր ունենալ:

Չեմ կարծում, որ կգտնվի խելացի մեկը, ով իրեն օրհնված կհամարի, եթե ֆինանսներ ունենալով հանդերձ՝ չունենա առողջություն կամ խաղաղություն իր ներսում ու ընտանիքում: Աստծուց օրհնված չէ նաև այն մարդը, ով ունի ֆինանսներ, առողջություն, լավ հարաբերություններ, բայց չունի անձնական շփում իրեն արարողի հետ:

Այս գրքում ես անդրադարձել եմ օրհնված մարդու կյանքի միայն մեկ՝ ֆինանսական բնագավառին վերաբերող հարցին: Այդ հարցը չափազանց կարևոր է ն մեզ, ն երկինքն ու երկիրն արարող Տիրոջ համար:

Ցանկանում եմ քեզ օրհնված կյանք:

*«Գնացե՛ք, տեսե՛ք...» սոցիալական
ծառայության ղեկավար՝*

Գայանե Հակոբյան

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊՊ Է, ԹԵ՞ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԻՃԱԿ

1. Աղքատությունը՝ մտածելակերպ է:

«Այն, ինչ կատարվում է քեզ հետ, խոսում է քո միջավայրի իրավիճակների մասին:

Այն, ինչ կատարվում է քո մեջ, խոսում է քո բնավորության մասին:

Այն, ինչ կատարվում է քո շնորհիվ, խոսում է քո խարիզմայի մասին»:

Ջ. Մարավելլ

2. Աղքատությունը՝ որոշում է:

Նորմալ մտածելակերպ ունեցող ոչ մի մարդ չի որոշում. «Ես աղքատ եմ լինելու»: Դրա փոխարեն նա հնարավորություն ունի մտածելու. «Ես որոշում եմ կայացնում՝ չլինել աղքատ»:

Ամերիկացի հայտնի հեռուստահաղորդավար, դերասանուհի և պրոդյուսեր Օփրա Ուինֆրիս*

* Գրքիս առաջին իսկ էջերում օրինակ բերելով Օփրա Ուինֆրիսին, պատասխանատվություն չեմ վերցնում նրա բարոյական նկարագրի ու վարքագծի համար: Նրան օրինակ եմ բերել հաշվի առնելով աշխարհում նրա կարկառուն դեմք լինելն ու ժամանակակից կյանքի անելանելի թվացող իրավիճակից իմաստուն ձևով դուրս գալը:

վաղ մանկությունն անցկացրել է տատիկի հետ: Տատիկը բապտիստական եկեղեցու անդամ էր և եկեղեցական ծառայությունների գնալիս Օփրային միշտ տանում էր իր հետ: Նա մի սպիտակամորթ ամերիկացու տանն աղախին էր: Նրա քույրերն ու աղջիկը՝ Օփրայի մայրը, նույնպես աղախիհներ էին մեծահարուստների տներում: Նրանք բնակություն էին հաստատել Միսսիսիպի նահանգում, որտեղ այդ ժամանակ սևամորթներն ամենադաժան անարգանքի էին ենթարկվում: Օփրայի տատիկի համար ամենալավ գործը, որին կարող էին ձգտել ինքը, իր քույրերն ու աղջիկը՝ որևէ բարի մեծահարուստի տանը որպես աղախին ծառայելն էր:

Մի օր, երբ տատիկը լվանում էր մեծահարուստի հագուստները, իսկ փոքրիկ Օփրան նստած էր նրա դիմաց, տատիկն ասում է. «Միրելի՛ս, աղոթի՛ր Աստծուն, որպեսզի, երբ մեծանաս, հնարավորություն ունենաս ծառայել մի բարի մեծահարուստի, ով երբեք քեզ չի ծաղրի նրա համար, որ դու սևամորթ ես»: Օփրան, որ ընդամենը չորս տարեկան էր, անմիջապես մտքում որոշում է կայացնում՝ երբե՛ք*:

* Master class, part 1, Oprah Winfrey.

Ապագայում նա պատմում է, որ եկեղեցական ծառայությունների ժամանակ հաճախ էր հովիվ-քարոզիչն ասում. «Ամեն բան կարող եմ ինձ գորացնող Հիսուս Քրիստոսով» (Փիլիպ. 4.13): Նա գերբնական հավատքով է ընդունում այդ խոսքերը և հետո ասում. «Մենք դառնում ենք այն, ինչին հավատում ենք»: Չորս տարեկան հասակում որոշում կայացնելով՝ երբեք աղքատ չլինել, և հետագայում մշտապես ապավինելով աստվածաշնչյան խոսքին՝ Փիլիպեցիների 4.13-ին, նա դառնում է աշխարհի 100 ամենաազդեցիկ մարդկանցից մեկը և առաջին ու առաջմ միակ սևամորթ կին միլիարդատերը:

3. Աղքատությունը՝ ոչ ճիշտ մտածելակերպի և սխալ բնավորության արդյունք է:

Անցյալ դարի 80-ական թվականների վերջին Դոնալդ Տրամպն* Ամերիկայի Միացյալ Նահանգների հաջողության ազգային խորհրդանիշն էր: Նա կառուցել էր բազմաթիվ հիասքանչ երկնաքերեր,

* Գրքիս առաջին իսկ էջերում օրինակ բերելով Դոնալդ Տրամպին, պատասխանատվություն չեմ վերցնում նրա բարոյական նկարագրի ու վարքագծի համար: Նրան օրինակ եմ բերել հաշվի առնելով աշխարհում նրա կարկառուն դեմք լինելն ու ժամանակակից կյանքի անելանելի թվացող իրավիճակից իմաստուն ձևով դուրս գալը:

վաստակել միլիարդավոր դոլարներ, գրել միլիոնավոր տպաքանակով վաճառվող «Գործարք վարելու արվեստը» գիրքը, դարձել հեռուստատեսային աստղ, ինքնաթիռների ու նավերի տեր և այլն:

Մամուլն անդադար գրում էր. «Այն ամենը, ինչին դիպչում է Դոնալդ Տրամպի ձեռքը, վերածվում է ոսկու»: «Իսկ ես հիմարի նման հավատում էի», - գրում է Տրամպը «Վերադարձի արվեստը» գրքում: «Ես հավատում էի, որ իմ կյանքն ամբողջությամբ հենց հաջողություն է, և այլ կերպ չէր էլ կարող լինել: Սկզբում ինձ թվում էր՝ բիզնես վարելը հարթ գործընթաց է: Եվ այն աստիճան անհոգ հանգստություն թույլ տվեցի, որ կորցրի նպատակաուղղվածությունը և համակ կենտրոնացումը՝ գործին: Իմ կայսրության գլխին սկսեցին մութ ամպեր կուտակվել, և ես բավական երկար ժամանակ դա չէի նկատում: Գործնականում դադարել էի իմ բիզնեսի կառավարմամբ և ընկերությունների զարգացմամբ զբաղվելուց»*:

Այնուհետև ինչ որ բան տեղի ունեցավ. ամերիկյան կառավարությունը հրատարակեց մի քանի օրենք, որոնց համաձայն՝ անշարժ գույքի գոր-

* The Art of Combak.

ծարքների հետ կապված նախկինում սահմանված որոշ հարկային գիջումներ փոխարինվում էին ավելի խիստ օրենքներով: Ընդ որում, այդ օրենքները վերաբերում էին ոչ միայն տվյալ ժամանակահատվածում իրականացված գործարքներին, այլ նաև նախկինում՝ մինչ այդ օրենքների ընդունումն իրականացված գործարքներին:

«Քաղաքական այրերին թվում էր, որ անշարժ գույքի շուկայի տղաները չափազանց լավ են ապրում և որոշեցին մի քիչ փոփոխություններ մտցնել մեր կյանքի մեջ», - գրում է Տրամպը:

Արդյունքում՝ անշարժ գույքի գործարքով զբաղվող բավականին մեծ թվով ընկերություններ փլուզվեցին, և նրանց մասին ոչ ոք այլևս ոչինչ չլսեց:

Ինչ վերաբերում է Դոնալդ Տրամպին՝ կապված այս օրենքների հետ, նրա ունեցվածքը, որ կազմում էր 3 մլդ. դոլար, անմիջապես փոխակերպվեց 9.5 մլդ. դոլար պարտքի:

Ի տարբերություն 90% կազմող այն գործարարների, ովքեր նույնպես հայտնվեցին այդ իրավիճակում և անվերադարձ հեռացան թատերաբեմից, Տրամպը նույնիսկ մեկ բոպե չհանձնվեց: Նա խորագնին ուսումնասիրեց և գնահատեց իրավի-

ճակը: Այդ ժամանակ զանգվածային լրատվական միջոցներն անդադրում ազդարարում էին Տրամպի կործանումը:

Նա, գնահատելով իրավիճակը, գրում է. «Իրոք, քաղաքական գործիչների անհետատեսությունն ու անգրագիտությունը ցնցող են: Շատ իրավիճակներ և գործընթացներ ուղղված են իմ և անշարժ գույքի շուկայում աշխատողների դեմ: Բայց եթե ես այն ժամանակ այդ աստիճան հիմար չլինեի, որ անհոգ հանգստության պատճառով կորցնեի տեսիլը, այժմ, ճիշտ է, կունենայի խնդիրներ, բայց ոչ այդքան խորը»:

Ետ նայելով՝ նա հայտնաբերում է իր սխալները և նշում, որ ինքը հավատացել է զանգվածային լրատվամիջոցների գովաբանություններին, թե՛ ինչին դիպչում է Դոնալդ Տրամպի ձեռքը, վերածվում է ոսկու: Բացի դրանից, դադարել է գործի վրա կենտրոնացած լինելուց, անհոգ հանգստության է մատնվել, կորցրել նպատակասլացությունը, մեծ տեսիլը և դադարել ամեն օր զարգացման վրա աշխատելուց:

Դոնալդ Տրամպն անմիջապես գործի է անցնում: Հրավիրում է այն բոլոր բանկերի ներկայա-

ցուցիչներին, ովքեր պահանջում էին շուտափույթ վերադարձնել իրենցից վարկով վերցված գումարները, և նրանց ներկայացնում այն գերհամարձակ ծրագիրը, որի իրականացման դեպքում ինքը ոչ միայն կվճարի բոլորի պարտքերը, այլև կրկին կմտնի թատերաբեմ որպես միլիարդատեր: Համոզիչ փաստարկներ բերելով՝ Տրամպը համաձայնության է գալիս իր հետ համագործակցող բանկերի հետ, այնուհետև իրականացնում ներկայացված ծրագիրը: Նա նույնիսկ սահմանված ժամկետից շուտ վերադարձնում է պարտքերը և, իսկապես, թատերաբեմ վերադառնում որպես միլիարդատեր:

Ինչո՞ւ և ինչպե՞ս:

Դոնալդ Տրամպը, հասկանալով ղեկավար այրերի սխալը, չգամվեց դրանց վրա: Նա զննեց իր ապրելաձևը և սխալներ փնտրեց իր վարքագծի մեջ: Եվ ոչ միայն գտավ այդ սխալները, այլև շուտափույթ շտկեց ու գործի անցավ նոր եռանդով: «Վերադարձի արվեստը» գրքում նա գրում է, որ կյանքում երբեք այդքան եռանդով և այդքան շատ չի աշխատել: Իսկ գլխավոր պայմանը՝ սխալներն իր մեջ փնտրելը, գտնելը և վերացնելն էր:

4. Աղքատությունը՝ մարդու համար Աստծո կատարյալ կամքը չիմանալու հետևանք է:

Քարոզիչներից մեկն Աստվածաշունչը նմանեցնում է երթևեկության կանոնների գրքին: Յուրաքանչյուր վարորդ պետք է տիրապետի այդ գրքում գրված կանոններին, հակառակ դեպքում ն՛ իր, ն՛ իր շրջապատի մարդկանց կյանքը վտանգի կենթարկվի: Աստվածաշունչն Աստծո հոգով լցված մի Գիրք է. «Ամեն Գիրք Աստվածաշունչ է և օգտակար վարդապետության և հանդիմանության և ուղղելու և արդարության խրատելու համար, որ Աստծո մարդը կատարյալ լինի՝ բոլոր բարի գործերի համար պատրաստված» (Բ Տիմոթ. 3.16): Այդ Գիրքը, Աստծո կատարյալ կամքին վերաբերող շատ այլ ուսմունքներին զուգահեռ, մարդկանց սովորեցնում է նաև այնպես ապրել, որ յուրաքանչյուրը երկրային կյանքից հաճույք ստանա. «Սիրելի՛ն, աղոթք եմ անում, որ ամեն բանի մեջ հաջող և առողջ լինես, ինչպես քո հոգին հաջող է» (Գ Հովհ. 2), իսկ մահից հետո հավիտենական կյանքն անցկացնի տիեզերքի տիրակալ ամենակարող Աստծո հետ:

Երկրի վրա յուրաքանչյուր առարկա ստեղծված է նպատակով: Եվ առարկան չի կարող ասել, թե ինչի համար է ստեղծվել: Առարկան ստեղծողը գիտի իր ստեղծածի անելիքը, կոչումը, և միայն նրան է հայտնի տվյալ առարկան վնասվելուց պահպանելու և օգտագործելու ճևր: Մարդը չի կարող դանակն օգտագործել որպես պտուտակահան, որքան էլ այն հարմար թվա: Նույնը և հակառակը՝ պտուտակահանը արտաքին տեսքով որքան էլ նման լինի դանակին, միևնույն է, չի կարող միս կտրել: Սուր դանակը տաք ջրով լվանալիս բթանում է: Եվ ոչ ոք իրավունք չունի հանդիմանելու դանակ ստեղծողին կամ տրտնջալու և բողոքելու, որ դրանով չի կարողանում միս կտրել: Մարդը պիտի գիտակցի, որ խախտել է դանակի պահպանման օրենքը, գուցե նույնիսկ չի իմացել, որ սուր դանակը չի կարելի լվանալ տաք ջրով, ինչի արդյունքում գրկվել է սուր դանակ ունենալուց և միսը հեշտ կտրելու հնարավորությունից:

Մարդ արարածը ստեղծվել է տիեզերքի արարիչ Աստծո կողմից՝ Նրա պատկերով և նմանությամբ. «Եվ Աստված ասաց՝ Մեր պատկերով և Մեր նմանությամբ մարդ շինենք» (Ծննդ. 1.26),

«Եվ Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդ. 1.27):

Այս փաստը չընդունելը, մեղմ ասած, հիմարություն է: Աստծո Խոսքն ասում է. «Անզգամն ասաց իր սրտում՝ Աստված չկա...» (Սաղմ. 14.1): Աստծո կամքը մարդ արարածի վերաբերյալ ճանաչելու համար պետք է կարդանք Աստվածաշունչը:

Սկսած Ծննդոց առաջին գլխից՝ ավարտած Հայտնության վերջին գլխով, մարդն ականատես է դառնում իր նկատմամբ Աստծո անսահման սիրո դրսևորմանը:

Շատ ընտանիքներում առանձնահատուկ ձևով են պատրաստվում նորածին երեխային տուն բերելուն: Վերանորոգում են երեխային հատկացված սենյակը, հատուկ անկողին պատրաստում, համապատասխան հագուստ, սանիտարահիգիենիկ պարագաներ, աչք շոյող գույներով խաղալիքներ գնում, և համապատասխան գրականություն ուսումնասիրում՝ երեխային ճիշտ խնամելու և դաստիարակելու համար:

Տեսնենք, թե ինչպես է վարվել մեր Երկնային Հայրը՝ տիեզերքի Տիրակալը, Ալֆան և Օմեգան.

«Սկզբում Աստված ստեղծեց երկինքը և երկիրը: Եվ երկիրն անձև ու դատարկ էր, և խավար կար անդունդի վրա, և Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրայով: Եվ Աստված ասաց. «Լոյս լինի», և լույս եղավ: Եվ Աստված տեսավ, որ լույսը բարի է: Եվ Աստված բաժանեց լույսը խավարից: Եվ Աստված լույսը կոչեց Ցերեկ և խավարը՝ Գիշեր: Եվ իրիկուն ու առավոտ եղավ առաջին օրը:

Եվ Աստված ասաց. «Ջրերի մեջտեղը հաստատություն լինի, որ ջրերը ջրերից բաժանի»: Եվ Աստված շինեց հաստատությունը ու բաժանեց հաստատության տակի ջրերը հաստատության վրա եղած ջրերից: Եվ այնպես եղավ: Եվ Աստված հաստատությունը կոչեց Երկինք: Եվ իրիկուն ու առավոտ եղավ երկրորդ օրը:

Եվ Աստված ասաց. «Երկնքի տակ եղած ջրերը մեկտեղ հավաքվեն, և ցամաքը երևա»: Եվ այնպես եղավ: Եվ ցամաքը կոչեց Երկիր և ջրերի ժողովը կոչեց Ծով: Եվ Աստված տեսավ, որ բարի է: Եվ Աստված ասաց. «Երկիրը կանաչ խոտ տա՝ սերմ տվող խոտ և պտղաբեր ծառ, որ պտուղ տա իր տեսակի պես, որի սերմը իր մեջ լինի երկրի վրա»: Եվ այնպես եղավ: Եվ Աստ-

ված տեսավ, որ բարի է: Եվ իրիկուն և առավոտ եղավ երրորդ օրը:

Եվ Աստված ասաց. «Լուսավորներ լինեն երկնքի հաստատությունում, որ բաժանեն ցերեկը գիշերից, և նշանների և ժամանակների և օրերի ու տարիների համար լինեն: Եվ լուսավորներ լինեն երկնքի հաստատությունում, որ երկրի վրա լույս տան»: Եվ այնպես եղավ: Եվ Աստված երկու մեծ լուսավոր շինեց. մեծ լուսավորը ցերեկին իշխելու համար, փոքր լուսավորը՝ գիշերին, և աստղերը: Եվ Աստված նրանց դրեց երկնքի հաստատությունում, որ երկրի վրա լույս տան և ցերեկի ու գիշերի վրա իշխեն և լույսը խավարից բաժանեն: Եվ Աստված տեսավ, որ բարի է: Եվ իրիկուն և առավոտ եղավ չորրորդ օրը:

... Եվ Աստված ասաց. «Երկիրը շնչավոր կենդանի հանի իր տեսակի պես՝ անասուններ և սողուններ և երկրի գազաններ իրենց տեսակի պես»: Եվ այնպես եղավ: ... Եվ Աստված տեսավ, որ բարի է» (Ծննդ. 1.1-25):

Նա հինգ օրում արարում է ամբողջ տիեզերքը, այնուհետև ստեղծում մարդուն և հնարավորություն տալիս, որ իշխի այն ամենին, ինչ արարվել է Իր կողմից, և վայելի եղեմական պարտեզը:

Ինչպիսին է երկիր մոլորակը: Նայենք երկնքին, օվկիանոսներին, թռչուններին, սողուններին, բնությանը... Երկիրն իր անպատմելի գեղեցկությամբ, տեսակների, գույների ու բույրերի բազմազանությամբ, արտասովոր շքեղությամբ պատմում է Աստծո էության և մարդու նկատմամբ Նրա վերաբերմունքի մասին: Երկնային Երուսաղեմը, որն արդեն հավիտենության համար է ստեղծվել, նույնպես ներկայացնում է Աստծո էությունը և վերաբերմունքը մարդու նկատմամբ.

«...Եվ նրա պարսպի շինվածքը հասպիս քարից էր: Եվ քաղաքը մաքուր ոսկի էր, պարզ ապակու նման: Եվ քաղաքի պարսպի հիմքը զարդարված էր ազնիվ ակունքներով: Առաջին հիմքը հասպիս, երկրորդը՝ շափյուղա, երրորդը՝ քաղկեդոն, չորրորդը՝ զմրուխտ, հինգերորդը՝ եղնգնաքար, վեցերորդը՝ սարդիոն, յոթերորդը՝ ոսկեքար, ութերորդը՝ բյուրեղ, իններորդը՝ տպագիոն, տասներորդը՝ քրիստապրաստս, տասնմեկերորդը՝ հակինթ, տասներկուերորդը՝ ամեթովս: Եվ տասներկու դուռը տասներկու մարգարիտից, ամեն մեկ դուռը՝ մեկ մարգարիտից, և քաղաքի հրապարակը՝ մաքուր ոսկի՝ ինչպես թափանցիկ ապակի» (Հայտն. 21.18-21):

Փիլիպեցիներին ուղղված թղթի 4.19-ում գրված է. «Եվ իմ Աստվածը լրացնի ձեր ամեն կարոտությունը Իր հարստության չափով՝ փառքով Քրիստոս Հիսուսով»: Մարդը պետք է արմատապես ազատվի իր նեղ, սահմանափակ, վախերով լի մտածելակերից. Աստծուց իրեն պարզևած օրերից թեկուզ մեկը տրամադրի իր միջավայրի և բնության ուսումնասիրմանը: Օրվա տարբեր ժամերին նայի երկնքին, հիանա ամպերի գեղեցկությամբ, վայելի լուսաբացի և արևամուտի չքնաղ գեղեցկությունը, գմայլվի թռչունների կախարդիչ ճովողյունով ու ծվլոցով, արբենա ծաղիկների բույրով ու գույներով, զարմանա նրանց բազմազանությամբ: Իր մտածելակերպը լայնացնելու համար այցելի կենդանաբանական այգի, և տեսնի միջատների, սողունների, կենդանիների գեղեցկությունն ու բազմազանությունը, և խորհի՝ ո՞վ է Աստված, ինչպիսին է Նրա վերաբերմունքը մարդ արարածի նկատմամբ:

ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏՎԱԾ ՈՒԶՈՒՄ Է, ՈՐ ՄԱՐԴԸ ՀԱՐՈՒՄՏ ԼԻՆԻ

Ինչ է գրում Աստվածաշունչը հարստության մասին. բացի վերոհիշյալ Փիլիպեցիներին ուղղված թղթի 4.19-ից, դիտարկենք այլ խոսքեր նույնպես: Արդյո՞ք Աստված ուզում է, որ մարդը հարուստ լինի:

«Հիշիր քո Եհովա Աստծուն, որովհետև Նա է հարստություն ստանալու համար քեզ ուժ տվողը, որ քո հայրերի հետ Իր երդումով արած ուխտը հաստատի, ինչպես և այսօր» (Երկր. Օր. 8.18):

«Սիրելիս, աղոթք եմ անում, որ ամեն բանի մեջ հաջող և առողջ լինես, ինչպես քո հոգին հաջող է» (Գ Հովհ. 2):

«Տեր Եհովայի Հոգին Ինձ վրա է, ըստ որում Տերը օժել է Ինձ՝ Նա ուղարկել է Ինձ՝ աղքատներին ավետիք տալու, կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատություն հրատարակելու և կապյալներին՝ արձակելու» (Եսայի 61.1):

Ինչ ավետիքի մասին է խոսքը:

«Որովհետև գիտեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ համար աղքատացավ Նա,

որ հարուստ էր, որ դուք Նրա աղքատությունով հարստանաք» (Բ Կորնթ. 8.9):

Եվ սա ամենը չէ. ամբողջ Աստվածաշունչը՝ և՛ Հին ուխտը, և՛ Նոր կտակարանը լի են մարդու հարուստ լինելու վերաբերյալ Աստծո կամքը հաստատող հորդորներով ու խոստումներով: Հիսուս Քրիստոսը երկիր եկավ, որպեսզի հոչակի Աստծո կատարյալ կամքը մարդ արարածի համար. «Տեր Եհովայի Հոգին Ինձ վրա է, ...Նա ուղարկել է Ինձ՝ աղքատներին ավետիք տալու...» (Եսայի 61.1):

Նա ոչ միայն հոչակեց, այլև գնաց ընդհուպ խաչի մահ, որպեսզի մարդը Գողգոթյան խաչի գորությունով ազատագրվի աղքատության անեծքից.

«Որովհետև գիտեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ համար աղքատացավ Նա, որ հարուստ էր, որ դուք Նրա աղքատությունով հարստանաք ...» (Բ Կորնթ. 8.9):

Դիտարկենք ևս մի քանի խոսքեր.

«Ծույլ մարդու արտի մոտով անցա և պակասամիտ մարդու արտի մոտով, և ահա փշերը դուրս էին եկել, նրանց երեսը ծածկել էին եղինջները, և նրա քարե պատը քանդվել էր: Եվ երբ տեսա, խրատ ստացա ու մտքումս պահեցի՝ մի քիչ քուն, մի քիչ ննջել, մի քիչ ձեռք ձեռքի տալ ու

պատկել... այդ ժամանակ քո աղքատությունը կգա իբրև ճանապարհորդ, և քո կարոտությունը՝ սպառազինյալ մարդու նման» (Առակ. 24.30-34):

«Գնա՛ մրջյունի մոտ, ո՛վ ծույլ, նրա ճանապարհները տես և իմաստուն եղի՛ր, որ իշխան, ոստիկան ու տիրող չունի, բայց իր կերակուրը պատրաստում է ամռանը և իր ուտելիքը հունձի ժամանակին է ժողովում: Մինչև նրբ ես պատկելու, ո՛վ ծույլ, նրբ ես զարթնելու քնիցդ...» (Առակ. 6.6-9):

«Գողը չի գալիս, որ միայն գողանա, այլ նաև՝ սպանի ու կորցնի: Ես եկա, որ կյանք ունենան և է՛լ ավելի ունենան» (Հովհ. 10.10):

Ընտրությունը մարդունն է. նա է որոշում՝ ընդունել աղքատությամբ, թե՛ բարգավաճման օրենքները, ապրել աղքատության քայքայիչ օրենքների տակ, թե՛ ընդունել Գողգոթյան խաչով իրեն տրված ավելցուկով ունենալու առաջարկը: Աստվածաշունչը ցույց է տալիս ունեցվածք ստանալու ճանապարհները, բայց միաժամանակ զգուշացնում է.

«Տիրոջ օրհնությունն է հարստացնում և չարչարվելը մի բան չի ավելացնում նրա վրա» (Առակ. 10.22):

«Իր հարստությանը հուսացողը վայր կընկնի, բայց արդարները կծաղկեն դալարի պես» (Առակ. 11.28):

«Օգուտ չունի հարստությունը բարկության օրը, բայց արդարությունը կազատի մահից» (Առակ. 11. 4):

«Հավատարիմ մարդու օրհնությունները շատ են, բայց հարստանալու շտապողը անպատիժ չի մնա» (Առակ. 28.20):

«Հիսուսը պատասխանեց ու ասաց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ չկա մեկը, որ թողնի տուն կամ եղբայրներ կամ քույրեր կամ հայր կամ մայր կամ կին կամ որդիներ կամ արտեր Ինձ համար կամ Ավետարանի համար, որ հարյուրապատիկ այստեղ՝ երկրի վրա, հիմա, չառնի տներ և եղբայրներ և մայրեր և որդիներ և արտեր՝ հալածանքի հետ, իսկ գալիք աշխարհում՝ հավիտենական կյանքը» (Մարկ. 10.29,30):

Հիսուսը չի ուզում, որ մարդը կառչած լինի իր ունեցվածքից կամ որևէ մեկից: Նա ուզում է, որ մարդն ամբողջությամբ նվիրվի Իրեն, քանի որ միայն Աստծուն անմնացորդ նվիրումը հնարավորություն կտա ունենալու ավելին: Նա ցանկանում է, որ մարդն ավելին ունենա, բայց երբեք այդ ավելին կուռք չդառնա նրա համար: Աստված ուզում է ազատել մարդուն կոռուպտության ծանր բեռից:

ՈՉ ՄԻԱՅՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼ, ԱՅԼԵԿ ԾՐԱԳՐԵԼ ՈՐՈՇՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Յուրաքանչյուր որոշում իրականացնելու համար անհրաժեշտ է քայլեր մշակել և ծրագրել այդ քայլերից յուրաքանչյուրի իրականացումը: Օրինակ՝ եթե որոշում է կայացվում նիհարել, ապա հստակեցվում ու ծրագրվում են գործողություններն այդ ուղղությամբ: Այդ առումով պետք է.

- խորհրդակցել դիետոլոգի հետ,
- հստակեցնել՝ քանի՞ կգ. է պետք նիհարել և որքան ժամանակահատվածում,
- ընտրել սննդակարգը և սնման ռեժիմը,
- կարգավորել մարզադահլիճ այցելելու խնդիրը և այլն:

Նույն ձևով, եթե ընտրվում է ֆինանսական բարգավաճման ճանապարհը, պիտի ուսումնասիրվի Խոսքը և կատարվի այն:

Ինչ էլ ասում Աստծո Խոսքը.

- **Չշտապել հարստանալու.**

«... հարստանալու շտապողը անպատիժ չի մնա» (Առակ. 28.20):

- Առանց հոգս անելու՝ փնտրել Երկնքի արքայությունը՝ հոգևորը.

«Հիսուսը աշակերտներին ասաց. «Հոգս մի արեք ձեր կյանքի համար՝ թե ինչ պիտի ուտեք, ո՛չ էլ մարմնի համար՝ թե ինչ պիտի հագնեք: Հոգին ավելի է կերակուրից, և մարմինը՝ հագուստից: Նայեք ազոավներին, որ ո՛չ սերմում են, և ո՛չ հնձում, ո՛չ էլ ամբարներ ունեն, և Աստված կերակրում է նրանց: Դուք որքան առավել եք թռչուններից: Ձեզնից ո՛վ կարող է հոգս անելով՝ իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել: Եթե ամենափոքրը կատարելու կարողություն չունեք, ինչո՞ւ եք այլ բաների համար հոգս անում: Նայեք շուշաններին՝ ինչպես են մեծանում՝ ո՛չ ջանք են անում, և ո՛չ մանում: Բայց, ասում եմ ձեզ, Առդմոնն էլ իր ամբողջ փառքի մեջ նրանց նման չհագավ: Իսկ եթե հանդի խոտը, որ այսօր կա և վաղը փոփի մեջ է գցվում, Աստված այնպես է հազցնում, որքան առավել ևս ձե՛զ, թերահավատներ: Եվ դուք մի՛ որոնեք՝ թե ինչ ուտեք կամ ինչ խմեք, և մի՛ գրգռվեք, որովհետև այդ բոլոր բաները աշխարհի հեթանոսներն են որոնում: Ձեր Հայրը գիտի, որ դրանք ձեզ պետք են: Սակայն Աստ-

ծո արքայությունը խնդրեք, և այդ բոլորը կավելանան ձեզ: Մի՛ վախեցիր, փոքր հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեցավ, որ արքայությունը տա ձեզ» (Ղուկ. 12.22-32)

Մարդու կարիքները չեն անտեսվում, պարզապես առաջնահերթության խնդիր է. երբ մարդն իր կյանքում Աստծո արքայությունը տառացիորեն դնի առաջին տեղում, ամբողջությամբ նվիրվի Քրիստոսին ու հավատա՝ առանց երկմտելու, որ իր մարմինն Աստծո տաճար է, Աստված իրեն կտա և՛ հագուստ, և՛ մեքենա, և՛ այն ամենը, ինչ անհրաժեշտ է լավ ապրելու համար, քանի որ այդ լավը մարդու համար Աստծուց արդեն որոշված է. «Նաև ամեն մարդ, որին Աստված տվել է հարստություն և կայք և նրան իշխանություն է տալիս նրանից ուտելու և բաժինն առնելու և իր աշխատանքով ուրախանալու՝ սա Աստծո պարգևն է» (Ժողով. 5.19):

- Լինել արդար.

«Օգուտ չունի հարստությունը բարկության օրը, բայց արդարությունը կազատի մահից» (Առակ. 11.4):

«Արդարը կազատվի նեղությունից, բայց նրա տեղը ամբարիշտը կգա» (Առակ. 11.8):

Անձնական կյանքում մարդն ամեն ինչում պետք է առաջնորդվի արդարությամբ՝ սկսած իր շարժառիթներից, մտքերից, ընդհուպ՝ գործողությունները:

- Լինել ողորմած և ունենալ սեր.

«Օրհնե՛ք ձեզ անիծողներին, աղոթե՛ք ձեզ նեղացնողների համար: Քո մի երեսին խփողին՝ մյուսն էլ դեմ արա: Եվ նա, որ քո վերարկուն քեզնից հանում է, շապիկդ էլ մի խնայիր նրանից:Ինչպես կամենում եք՝ մարդիկ ձեզ անեն, նույնպես դուք արեք նրանց: Եվ եթե ձեզ սիրողներին սիրեք, ի՞նչ շնորհք է ձեզ, որովհետև մեղավորներն էլ են իրենց սիրողներին սիրում: Եվ եթե ձեր բարերարներին բարի անեք, ի՞նչ շնորհք է ձեզ, որովհետև ձեր մեղավորներն էլ են այնպես անում: Եվ եթե փոխ եք տալիս նրանց, որ ետ առնելու հույս ունեք, ի՞նչ շնորհք է ձեզ, որովհետև մեղավորներն էլ են մեղավորներին փոխ տալիս, որ նրանցից հավասար չափը ետ առնեն: Բայց սիրե՛ք ձեր թշնամիներին և բարի՛ արեք և փո՛խ

տվեք՝ ոչինչ ակնկալելով, և ձեր վարձքը շատ կլինի և Բարձրյալի որդիներ կլինեք, որովհետև Նա քաղցր է երախտամոռների և չարերի հանդեպ: Ուրեմն ողորմած եղեք՝ ինչպես ձեր Հայրն էլ ողորմած է: Եվ մի՛ դատեք, ու չեք դատվի: Մի՛ դատապարտեք, ու չեք դատապարտվի: Արձակե՛ք, ու կարձակվե՛ք: Տվե՛ք, ու կտրվի ձեզ. լավ չափով՝ թափ տված, շարժված, լիփ-լիքը կտան ձեր գոգը, որովհետև այն չափով, որ չափեք, նրանով կչափվի ձեզ» (Ըուկ. 6.28-38):

Շատերն իրենց ուշադրությունը բևեռում են վերջին նախադասության վրա՝ «Տվե՛ք, և կտրվի ձեզ. լավ չափով՝ թափ տված...»: Աստված երբեք որևէ տեսակի հարստություն չի վստահի սիրուց գուրկ, աններողամիտ մարդուն: Յուրաքանչյուրը պիտի իմանա, որ իր ցանածը կհնձի միմիայն վերոնշյալ խոսքն ամբողջությամբ կատարելուց հետո:

- Տալ տասանորդը.

Ջոհաբերություն կամ նվիրատվություն կատարելը կարևոր, բայց և կամավոր պայման է, մինչդեռ եկամտի 10%-ը տալը յուրաքանչյուր քրիստոնյայի պարտականությունն է:

«Ձեր հայրերի օրերից ի վեր խոտորվել եք Իմ պատվերներից և դրանք չեք պահել: Ե՛տ դարձեք դեպի Ինձ, և Ես էլ կդառնամ դեպի ձեզ,- ասում է Ջորաջ Տերը,- բայց դուք ասում եք՝ ինչ բանում ետ դառնանք: Մի՞թե մարդ Աստծուն կխաբի, որ դուք Ինձ խաբում եք: Բայց դուք ասում եք՝ ինչ բանում ենք խաբում: Տասանորդում և ընծայում: Անեծքով դուք անհիծված եք, որովհետև ամբողջ ազգդ է Ինձ խաբում: Ամբողջ տասանորդը տարեք գանձատուն, որ Իմ Տանը պաշար լինի: Եվ Ինձ փորձեք սրանով,- ասում է Ջորաջ Տերը,- թե արդյո՞ք չեմ բացի ձեզ համար Երկնքի պատուհանները և օրհնություն թափի ձեզ համար, մինչև որ տեղ չլինի: Եվ Ես պիտի կշտամբեմ ձեզնից ուտողին, որ նա չապականի ձեր երկրի արդյունքը, և ձեր որթը անպտուղ չլինի այգում,- ասում է Ջորաջ Տերը» (Մաղաք. 3.7-11):

Տասանորդը տրվում է ոչ միայն այն նպատակով, որ Աստծո տանը պաշար լինի, այլև՝ Երկինքը բացվի մարդու վրա, ու Աստված վերացնի ուտողին, որպեսզի նա կորուստներ չունենա: Եվ, ամենակարևորը, տասանորդը տալով՝ նա ցույց է տալիս իր հավատարմությունն ու վստահությունը առ Աստված:

- Մշտապես ցանել՝ առանց իրադրությունների նայելու.

«Կա, որ ցրվում է և էլ է ավելանում, բայց չափից դուրս խնայողը կա, սակայն կարոտության է հասնում» (Առակ. 11.24,25):

«Քամուն նայողը սերմը չի ցանի, և ամպերին նայողը՝ չի հնձի: Ինչպես չգիտես, թե որն է քամու ճանապարհը, ինչպես են շինվում ոսկորները հղի կնոջ արգանդում, նույնպես և չգիտես ամենաստեղծ Աստծո գործը: Առավոտյան ցանի՛ր քո սերմը, և երեկոյան թող չդադարի քո ձեռքը, որովհետև չգիտես, թե որն է հաջողվելու՝ սա՛, թե՛ նա, կամ երկուսն էլ միասին են լավ լինելու» (Ժողով. 11.4-6):

Մարդը պիտի ցանի ցանկացած իրավիճակում, իսկ տնտեսական ճգնաժամի մեջ, նույնիսկ, ավելի շատ, քանի որ նրա ֆինանսական բարգավաճումը Երկնքից է:

«Արտասուքով ցանողները ցնծությունով կհնձեն: Նա, որ գնում է և լաց լինում՝ ցանելու սերմը տանելով, ետ կգա ցնձալով՝ իր ցորենի խուրձերը բերելով» (Մաղմ. 126.5,6):

Աստծուն վստահողի հարուստ լինելը կախված չէ երկրի ղեկավարությունից կամ տնտեսա-

կան զարգացման մակարդակից: Աստծո ժողովուրդն ապրում է գերբնական հավատքով: Հիշենք մարգարեի կնոջը.

«Եվ մարգարեի որդիների կանանցից մեկն աղաղակեց դեպի Եղիսեն՝ ասելով. «Ծառադ՝ իմ մարդը, մեռել է: Դու գիտես, որ ծառադ երկյուղած էր Տերից: Պարտատերը եկել է, որ իմ երկու երեխաներին իր համար ծառաներ տանի»: Եվ Եղիսեն ասաց նրան. «Ես քեզ ինչ անեմ, ասա ինձ: Ինչ ունես տանդ»: Եվ նա ասաց. «Աղախինդ տանը մի յուղի ամանից բացի ոչինչ չունի»: Եվ նա ասաց. «Գնա՛ քո բոլոր դրացիներից դատարկ ամաններ ուզիր, քիչ չհավաքես: Ու մտիր տունդ և դուռը քո ու որդիներիդ ետևից փակիր և յուղը լցրու այն բոլոր ամանների մեջ և լցվածները վերցրու»: Եվ կինը գնաց նրա մոտից ու դուռը կողպեց իր և որդիների ետևից: Նրանք իրեն ամաններ էին տալիս, ու նա լցնում էր: Եվ երբ ամանները լցվեցին, ասաց տղային՝ էլի աման տուր: Նա էլ ասաց՝ էլ աման չկա: Եվ յուղը դադարեց: Եվ կինը եկավ ու պատմեց Աստծո մարդուն: Նա էլ ասաց. «Գնա՛, յուղը ծախիր ու պարտքդ վճարիր, իսկ մնացածով՝ ապրեք դու և տղաներդ» (Դ Թագ. 4.1-7):

Հիշենք նաև աղքատ որբնայրուն, ով հավատաց Աստծո Խոսքին և իր հացը տվեց մարգարեին՝ չնայած ապրում էր մի երկրում, որը երաշտի պատճառով տնտեսական ճգնաժամի մեջ էր:

«Եվ Տիրոջ Խոսքը եղավ նրան՝ ասելով. «Վերկաց, գնա՛ Սիդոնացիների Սարեփթան և այնտեղ նստիր. Ես մի որբնայրի կնոջ հրամայել եմ, որ քեզ կերակրի»: Եվ նա վեր կացավ ու գնաց Սարեփթա և հասավ քաղաքի դուռը, և ահա այնտեղ մի որբնայրի փայտ էր ժողովում: Եվ նա կանչեց նրան ու ասաց. «Խնդրո՞ւմ եմ, ինձ համար մի քիչ ջուր բեր, որ խմեմ»: Եվ երբ նա գնաց բերելու, նրան կանչեց ու ասաց. «Խնդրո՞ւմ եմ, ինձ համար մի պատառ էլ հաց բեր»: Եվ նա ասաց. «Կենդանի է քո Տեր Աստվածը, որ ես մի նկանակ չունեմ, բացի մի բուռ ալյուրից սափորում և մի քիչ յուղ՝ կուժում: Ահա փայտ եմ ժողովում, որ գնամ պատրաստեմ այն ինձ համար ու որդուս համար, որ ուտենք ու մեռնենք»: Եվ Եղիան ասաց նրան. «Մի՛ վախեցիր, գնա՛ և արա՛ քո խոսքի պես, միայն թե առաջ ինձ համար մի փոքր շոթ շինիր նրանից ու բեր, իսկ հետո քո և որդուդ համար կշինես, որովհետև այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը՝ սափորում

ալյուրը չպիտի վերջանա և կուժից յուրը չի պակասի մինչև այն օրը, որ Տերը անձրև կտա երկրի երեսին»: Եվ նա գնաց ու արեց Եղիայի խոսքի պես: Եվ նա և կինը ու իր տունը կերան բավական ժամանակ: Եվ սափորից ալյուրը չէր վերջանում, ու կուժից յուրը չէր պակասում Տիրոջ այն Խոսքի պես, որ ասաց Եղիայի բերանով» (Գ Թագ. 17.8-16):

- Առանց հավատքի՝ անհնար է հաճելի լինել Աստծուն.

«Բայց առանց հավատքի՝ անկարելի է հաճելի լինել Աստծուն, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, որ Նա կա և Իրեն խնդրողներին վարձահատույց է լինում» (Եբր. 11.6):

Աստված յուրաքանչյուրին տվել է հավատք. «Որովհետև, Աստծո շնորհքով, որ ինձ տրված է, ասում եմ ձեզ՝ բոլորիդ, ոչինչ չմտածել ավելի, քան արժան է մտածել, այլ պարկեշտ լինել այնպես, ինչպես Աստված ամեն մեկին հավատքի չափը բաժանեց» (Հռոմ. 12.3): Սակայն մենք պետք է զարգացնենք այդ հավատքը:

Յուրաքանչյուր ոք՝ թե՛ կին, թե՛ տղամարդ, ունի մկաններ, բայց այդ մկանները զարգանում

են ֆիզիկական վարժությունների արդյունքում: Հավատքը մարդու մեջ զարգանում է Աստծո Խոսքը կարդալուց. «Ուրեմն, հավատքը լսելուց է, և լսելը՝ Աստծո Խոսքից» (Հռոմ. 10. 17):

Նայենք մեր հավատքի Զորագլխին՝ Հիսուս Քրիստոսին. «Նայենք հավատքի Զորագլխին և կատարողին՝ Հիսուս Քրիստոսին, որ Իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ և ամոթը արհամարհելով՝ Աստծո Աթոռի աջ կողմը նստեց» (Եբր. 12.2), և սովորենք Նրանից:

Աստված շահագրգռված է, որ մարդու հավատքը՝ Իր Խոսքի հանդեպ, լինի ամբողջական, և Իր ժողովուրդը լինի հարուստ, այդ պատճառով խոստանում է սերմ տալ սերմնացանին. «Բայց Նա, որ սերմ ցանողին սերմ է պարգևում և հաց՝ կերակուրի համար, Նա կպարգևի և կշատացնի ձեր սերմը և կանցնի ձեր արդարության պտուղը: Ամեն բանի մեջ հարստացած՝ ամեն լիությունով, որ մեզանով գոհություն է բերում Աստծուն» (Բ Կորնթ. 9.10,11):

Աստծո զավակներն են, որ ֆինանսավորում են Ավետարանի տարածման գործը: Սատանան շահագրգռված է, որ քրիստոնյա աստվածապաշտ ժողովուրդն աղքատ լինի: Աղքատ կամ մի կերպ ծայրը ծայրին հասցնող քրիստոնյան ինչպե՞ս պի-

տի ֆինանսավորի Ավետարանի տարածումը գլոբալ մակարդակով՝ հեռուստածրագրեր, քրիստոնեական կայքեր, բարձր որակի ֆիլմեր ստեղծի, գրքեր տպագրի և աջակցի այն օժյալներին, ովքեր փրկության Ավետարանն են տանում ազգերին: Կարիքի մեջ գտնվող քրիստոնյան ինչպէս պիտի կատարի Մատթեոս 25.34-40-ը.

«Այն ժամանակ թագավորը կասի Իր աջ կողմիններին. «Եկե՛ք, ո՛վ Իմ Հոր օրհնվածներ, ժառանգե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված թագավորությունը: Քանի որ սոված էի, և դուք Ինձ կերակրեցիք: Ծարավ էի, և դուք Ինձ ջուր տվեցիք: Օտար էի, և Ինձ ձեզ մոտ առաք: Մերկ էի, և հագցրիք Ինձ: Հիվանդ էի, և Ինձ այցելեցիք: Բանտի մեջ էի, և Ինձ մոտ եկաք»: Այն ժամանակ արդարները կպատասխանեն Նրան ու կասեն. «Տէ՛ր, է՛րբ տեսանք Քեզ սոված ու կերակրեցինք, ծարավ՝ ու խմեցրինք: Ե՛րբ տեսանք Քեզ օտար և մեզ մոտ առանք, կամ մերկ՝ ու հագցրինք: Ե՛րբ տեսանք Քեզ հիվանդ կամ բանտի մեջ ու եկանք Քեզ մոտ»: Թագավորն էլ կպատասխանի նրանց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետև այս Իմ փոքր եղբայրներից մեկին արիք՝ Ինձ արիք»»:

Աստծուն վստահողը կարող է իր հավատքն ամրապնդել Սուրբ Հոգով աղոթելով. «Բայց դուք, սիրելիներ, ձեր անձերը ձեր սուրբ հավատքի վրա շինեք՝ Սուրբ Հոգով աղոթք անելով» (Հուդա 20):

Աստծո կամքն այս երկրի վրա իրականացնելու համար զոհաբերություն կատարող յուրաքանչյուր քրիստոնյա պիտի հավատա ցանքի և հունձքի օրենքին, սերմի զորությանը. այն ֆինանսը, որ հավատքով ցանվում է բարի հողի մեջ, անպայման պտուղ է բերում:

«Մի՛ խաբվեք, Աստված չի ծաղրվում: Որովհետև մարդ ինչ ցանի, այն էլ կհնձի: Մարմնի մեջ ցանողը մարմնից ապականություն կհնձի: Եվ Հոգու մեջ սերմողը Հոգուց հավիտենական կյանքը կհնձի: Եվ չձանձրանաք բարին գործելուց, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք: Ուրեմն, քանի որ ժամանակ ունենք, բարի՛ անենք ամենքին, մանավանդ՝ հավատքի մարդկանց» (Գաղատ. 6.7-10):

- Լինել կատարյալ հնազանդ՝ Աստծո կամքին.

Տերն է որոշում՝ որտեղ ապրել, և Նա է բացում մարդու աչքերը՝ ճանաչելու այն կոչումը, որի մեջ պիտի մտնի և ծառայի Իրեն. «Եվ երկրի մեջ

սով եղավ... Եվ Իսահակը գնաց փղշտացիների Աբիմելեք թագավորի մոտ՝ Գերար: Եվ Եհովան երևաց նրան և ասաց. «Եգիպտոս մի՛ իջիր, բնակվիր այն երկրում, որ քեզ կասեմ»» (Ծննդ. 26.1,2):

Իսահակը չգնաց Եգիպտոս: «Իսահակն այն երկրի մեջ ցանեց և այդ տարին հարյուրի չափ արդյունք գտավ: Եվ Եհովան օրհնեց նրան: Եվ մարդը բարձրացավ և քանի գնաց շատ մեծացավ, մինչև որ շատ մեծացավ: Եվ ոչխարներ և արջառուներ և շատ ծառաներ ունեցավ...» (Ծննդ. 26. 12-14):

- Հպարտ չլինել.

Աստված ատում է հպարտությունը:

«Որովհետև այսպես է ասում Բարձրը և Բարձրյալը, հավիտենականության մեջ ապրողը, Ում անունը Սուրբ է. «Ես բնակվում եմ բարձրում և սուրբ տեղում, բայց լինում եմ կոտրած ու խոնարհ հոգի ունեցողի հետ, որ խոնարհների հոգին կենդանացնեմ և կենդանացնեմ սրտով կոտրվածներին» (Եսայի 57.15):

Հպարտությունը խանգարում է ընդունել Աստծո օրհնությունը. «Կորստից առաջ գնում է գոռոզությունը, և կործանումից առաջ՝ ամբարտավան հոգին» (Առակ. 16.18):

- Ունենալ սպասողականություն.

Մարդը երբ հավատա իր ցանքին ու հավատքը դրսևորող խոսքեր խոսի կամ հավատքն ապացուցող գործողություններ կատարի, Աստծուն հաճելի կդառնա: Նա մարդուց ակնկալում է երկրպագություն, սիրո և հավատքի դրսևորում.

«Եվ դառնալով դեպի կինը՝ Սիմոնին ասաց. «Տեսնո՞ւմ ես այս կնոջը: Ես քո տունը մտա, Իմ ոտքերի համար դու ջուր չտվեցիր, բայց նա իր արտասուքով թրջեց ոտքերս և մազերով սրբեց: Դու Ինձ համբույր չես տվել, իսկ նա՝ քանի այստեղ եմ մտել, ոտքերս համբուրելուց չդադարեց: Դու յուղով չօծեցիր Իմ գլուխը, նա անուշահոտ յուղով օծեց Իմ ոտքերը: Նրա շատ մեղքերը ներված կլինեն, որովհետև շատ սիրեց: Բայց որին քիչ թողվի, նա քիչ կսիրի»» (Լուկ. 7.44-47): «Եվ Նա ասաց այն կնոջը՝ քո հավատքը ապրեցրեց քեզ, գնա՛ խաղաղությունով» (Լուկ. 7.50):

Աստված մարդուն շատ բան է տվել և՛ հոգևոր, և՛ ֆիզիկական առումով: Եվ յուրաքանչյուր տվածի համար ունի ակնկալիք: Նա եթե ակնկալիք չունենար մարդուց, չէր ասի. «Առանց հավատքի անկարելի է հաճելի լինել Աստծուն» (Եբր. 11.6):

Հավատքը ցույց է տալիս, որ կա ինչ-որ մի բանի ակնկալիք: 12 տարի արյունահոսությամբ տառապող կինը բժշկություն էր ակնկալում, և Նրա ակնկալիքը, որ դրսևորվեց հավատքով, ստացավ սպասված արդյունքը. «Եվ մի կին կար, որ 12 տարուց ավելի տառապում էր արյունահոսությամբ: Իր ամբողջ ունեցվածքը ծախելու տվել էր բժիշկներին, բայց չէր կարողացել բժշկվել: Նա մոտ եկավ ետևից և Նրա հանդերձի ծայրին դիպավ: Եվ իսկույն արյունահոսությունը դադարեց: Եվ Հիսուսը հարցրեց. «Ո՞վ Ինձ դիպավ»: Եվ երբ ամենքը ուրացան, Պետրոսն ասաց. «Վարդապետ, ժողովուրդը սեղմում է Քեզ ու նեղում, և Դու հարցնում ես՝ ո՞վ դիպավ»: Եվ Հիսուսն ասաց. «Մեկը դիպավ Ինձ, որովհետև Ես իմացա, որ զորություն դուրս եկավ Ինձնից»: Եվ կինը երբ տեսավ, որ ծածուկ չմնաց, դողալով մոտ եկավ, Նրա ոտքերի առջև ընկավ ու պատմեց, թե ինչ պատճառով Իրեն դիպավ, և թե ինչպես իսկույն բժշկվեց: Հիսուսն էլ ասաց նրան. «Քաջացիր, դուստր, քո հավատքը բժշկեց քեզ: Գնա՛ խաղաղությունով» (Լուկ. 8.43-48):

Մարդը երբ շատ է ցանուս, պետք է ակնկալի, որ շատ է հնձելու. «Տվե՛ք, և կտրվի ձեզ. լավ չափով՝ թափ տված, շարժված, լիփ-լիքը կտան ձեր գոգը, որովհետև այն չափով, որ չափեք, նրանով կչափվի ձեզ» (Դուկ. 6.38):

Որոշ քարոզիչներ ասում են. «Տվե՛ք Աստծո սիրուց ելնելով և ոչինչ մի՛ ակնկալեք»: Սա խորը մոլորություն է:

Տիեզերքի Տիրակալը և մեր գործազուր Երկնային Հայրը մարդուն ստեղծել է Իր պատկերով ու նմանությամբ. «Եվ Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան» (Ծննդ. 1.27): Նա ուզում է, որ մարդն Իր նման լինի ամեն հարցում:

Աստված ամենամեծ տվողն է: Նա մարդուն տվել է Իր պատկերը և նրա մեջ դրել Իր հատկանիշները: Այսօր մարդ արարածը ցնցող հայտնագործություններ է կատարում, արվեստի հանճարեղ գործեր ստեղծում, արարում անպատմելին. ինչի՞ շնորհիվ, իհարկե, միմիայն այն բանի, որ Աստված նրան ստեղծել է Իր նմանությամբ:

Աստված մարդուն Իր պատկերով ու նմանությամբ ստեղծելուց բացի նվիրել է այս չքնաղ մոլորակը՝ լի գանձերով ու անպատմելի գեղեցկությամբ:

Նա մարդուն պարզել է փրկություն, որն աշխարհի ամենամեծ նվերն է. «Որովհետև շնորհքով եք փրկված, հավատքի ձեռքով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարզեն է, ոչ թե գործերից, որ ոչ մեկը չպարծենա» (Եփես. 2.8,9):

Ոչ ոք չի կարող իր գործերով արժանանալ փրկությանը՝ այս երկրի վրա ազատվել սատանայի անեծքից ու մահից, և հետո հավիտենությունն անցկացնել արքաների Արքայի, տերերի Տիրոջ հետ: Այդ փրկությունը մարդկությանը նվիրելու համար Նա Իր միածին Որդուն է տվել. «Որովհետև Աստված այնպես սիրեց այս աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3.16): Եվ տալով Իր Որդուն՝ Նա ակնկալում էր որդեգրել մեզ:

Աստված մարդուն հավատք է նվիրել: Յուրաքանչյուր մարդ ինչպես ունի քիթ, բերան, աչքեր..., այնպես էլ ունի հավատք՝ «... ինչպես որ Աստված ամեն մեկին հավատքի չափը բաժանեց» (Հռոմ.12.3):

Մարդու հավատքը սնելու և զորացնելու համար Նա Իր Խոսքն է տվել. «Եվ հավատքը լսելուց է, և լսելը՝ Աստծո Խոսքից» (Հռոմ. 10.17):

Այս ամենից բացի Աստված մարդուն Սուրբ Հոգու պարզևներն է տվել. «Բայց ամեն մեկին տրված է Հոգու հայտնությունը օգտի համար: Մեկին Հոգուց տրված է իմաստության Խոսք, և ուրիշին՝ գիտության Խոսք: Մյուսին հավատք՝ նույն Հոգով, ուրիշին՝ բժշկության պարզևներ՝ նույն Հոգով: Մեկին՝ զորությունների ներգործություններ, և մյուսին՝ մարգարեություն: Ուրիշին՝ հոգիների զանազանում, մյուսին՝ այլ և այլ լեզուներ, ուրիշին՝ լեզուների թարգմանություններ: Բայց այս ամենը հենց միևնույն Հոգին է ներգործում՝ ամեն մեկին բաժանելով՝ ինչպես կամենում է» (Ա Կորնթ. 12.7-11):

Այս պարզևների միջոցով ենք ստանում արտասովորը, մարդուն երջանիկ դարձնելու համար անհրաժեշտը:

Աստված մեզ տվել է նաև Սուրբ Հոգու պտուղները. «Բայց Հոգու պտուղն է սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, ժուժկալություն, այնպիսիների դեմ օրենք չկա» (Գաղատ. 5.22,23):

Նա այս ամենը տվել է Հիսուս Քրիստոսով Իր որդիներն ու դուստրերը դարձած մարդկանց՝

սիրուց ելնելով և ԱԿՆԿԱԼԵԼՈՎ, որ նրանք Իր պարզևները կիրառելով՝ կօգնեն միմյանց ու ցույց կտան, թե ինչպիսին է Ինքը.

«Հիվանդներին բժշկեք, բորոտներին սրբեք, մեռելներին հարություն տվեք, դևերին հանեք: Ձրի առել էք՝ ձրի տվեք» (Մատթ. 10.8):

Եթե Նա ակնկալիք չունենար և ասեր. «Ես Իմ միածին Որդուն զոհում եմ, որովհետև սիրում եմ մարդուն», կամ՝ «Ես մարդուն տալիս եմ Սուրբ Հոգու պարզևները՝ հրաշագործության, մարգարեության..., ոչինչ չակնկալելով, ուղղակի որպես Իմ սիրո դրսևորում», ինչ օգուտ կստանար մարդը դրանից: Եթե Նա այդ պարզևները տալու նպատակը չասեր, հնարավոր է, որ մարդը դրանք օգտագործեր նույնիսկ ի վնաս իրեն և միջավայրին: Ո՛չ, այն ամենը, ինչ Տերը տվել է մարդուն, բարձրագույն նպատակ և մեծ ակնկալիք ունենալով է տվել: Տերերի Տերը Իր երազանքներն ու անուրջներն իրականացնում է տալու ճանապարհով: Նա տվեց Իր միածին Որդուն և ստացավ մեզ, Նա տվել է Սուրբ Հոգու պարզևները և ստանում է բժշկված մարդիկ, փրկություն ստացած ազգեր:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐ ԿՅԱՆՔ

Կրկին անդրադառնանք գրքի սկզբում առաջ քաշած հարցադրմանը՝ աղքատությունը մտածելակերպ է, թե՛ սոցիալական վիճակ: Եթե վերոհիշյալ փաստերը քեզ օգնեցին հասկանալու, որ աղքատությունը մտածելակերպ է, և աստվածների Աստծո, տիեզերքի Տիրակալի և միննույն ժամանակ մեր Երկնային Հոր կամքն է՝ մարդուն տեսնել նյութապես ապահովված. «Որովհետև գիտեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ համար աղքատացավ Նա, որ հարուստ էր, որ դուք Նրա աղքատությունով հարստանաք», կարող ես ապաշխարել և նոր կյանք սկսել Աստծո հետ:

Ինչո՞ւ պիտի մարդն ապաշխարի և ինչպե՞ս: Ապաշխարել է պետք նրա համար, որ ուշադիր չի եղել Աստծո Խոսքի հանդեպ և զգուշությամբ չի կատարել Նրա բոլոր պատվիրանները: Եթե ուշադիր լիներ Աստծո Խոսքի հանդեպ և այն զգուշությամբ կատարեր, հիմա կվայելեր Երկրորդ Օրինաց 28.1-14-ում գրված օրհնությունները. «Եվ եթե քո Եհովա Աստծո ձայնին

ուշադրությամբ լսես, որ զգուշությամբ կատարես Նրա բոլոր պատվիրանները, որոնք Ես այսօր քեզ պատվիրում եմ, քո Եհովա Աստվածն էլ քեզ երկրի բոլոր ազգերից գերազանց կանի: Եվ այս բոլոր օրհնությունները կգան, քեզ կհասնեն, եթե քո Եհովա Աստծո ձայնին լսես: Դու քաղաքի մեջ օրհնյալ և դաշտի մեջ օրհնյալ կլինես: Օրհնյալ կլինի քո որովայնի պտուղը և քո երկրի պտուղը, քո անասունների պտուղը, կովերիդ ծնունդը և ոչխարներիդ հոտերը: Օրհնյալ կլինի քո կողովը և քո տաշտը: Դու օրհնյալ կլինես մտնելիս և օրհնյալ կլինես դուրս գալիս: Եհովան քո առջև ջարդել կտա քեզ վրա դուրս եկած թշնամիներիդ, նրանք քո դեմ մեկ ճանապարհով դուրս կգան, բայց յոթ ճանապարհով կփախչեն: Եհովան օրհնություն կուղարկի քո շտեմարաններում և քո բոլոր ձեռնարկելիք գործերում: Եվ քեզ կօրհնի քո Եհովա Աստվածը քեզ տված երկրում, ինչպես որ քեզ երդում է արել, եթե քո Եհովա Աստծո հրամանները պահես և Նրա ճանապարհներով գնաս: Եհովան քեզ սուրբ ժողովուրդ կհաստատի, և երկրի բոլոր ժողովուրդները կտեսնեն, որ Եհովայի անունը կոչված է քեզ վրա, և քեզնից

կվախենան: Եվ Եհովան քեզ առատություն կտա քո բարության համար՝ քո որովայնի պտուղը, քո անասունների պտուղը և քո երկրի պտուղը շատացնելով այն երկրի վրա, որ Եհովան քո հայրերին երդվեց քեզ տալու համար: Եհովան Իր բարության գանձը՝ այսինքն՝ Երկինքը, քեզ համար կբացի, որ քո երկրի անձրևը տա իր ժամանակին և քո ձեռքի ամեն գործը կօրհնի, և դու շատ ազգերի փոխ կտաս, բայց դու փոխ չես վերցնի: Եվ Եհովան գլուխ կանի քեզ և ոչ թե ազի: Դու միշտ բարձրում կլինես և ցածում չես լինի, եթե քո Եհովա Աստծո պատվիրաններին լսես, որոնք Ես այսօր քեզ պատվիրում եմ, որ պահես և կատարես: Եվ չշեղվես աջ կամ ձախ բոլոր այն խոսքերից, որոնք քեզ այսօր պատվիրում եմ՝ օտար աստվածների ետևից գնալու համար, որ նրանց ծառայություն անես»:

Ապաշխարել է պետք նաև կրոնական մտածելակերպի, անհավատության կամ թերահավատության համար: Մարդը եթե ամբողջությամբ վստահեր Աստծո Խոսքին, Ֆինսանսի անհրաժեշտության դեպքում կգար իր Երկնային Հոր առջև և կաներ այն, ինչ Աստվածաշունչն է ասում, մինչդեռ

ոչ թե զարգացրել է Աստծուց իրեն շնորհված հավատքը, այլ շտապել է պարտք վերցնել հարևանից: Այնուհետև մտածել է անձնական բիզնես ունենալը կփրկի, և առանց Սուրբ Հոգուց առաջնորդություն ստանալու և Աստծու Խոսքի շուրջ լուրջ մտորելու՝ ինչպես գրված է Հեսու 1.8-ում. «Այս Օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ գիշեր և ցերեկ նրա վրա մտածես, որ պահես և կատարես նրա մեջ գրվածի պես, որովհետև այն ժամանակ ճանապարհները հաջողակ կանես և այն ժամանակ խելամուտ կլինես», շտապել է վարկ վերցնել, որը հետագայում ձնագնդիի նման այնպես է մեծացել, որ իրեն գլորել է օտար ափեր:

Մարդուն ապաշխարություն է պետք այն բանի համար, որ երբ երկնքից նշան է ստացել՝ կանգնեցնելու իր արշավը պարտքերի աշխարհում և փակելու կործանվող «բիզնեսը», չի հնազանդվել և թույլ է տվել, որ ամեն ինչ քանդվի իր գլխին, քանի որ այնքան է մթագնած եղել հարստանալու մոլուցքով, կամ այնպես է մաքառել՝ պարտքերի լծից դուրս գալու համար, որ մոռացել է իրեն հարստանալու ուժ տվող Աստծուն.

«Հիշիր քո Եհովա Աստծուն, որովհետև Նա է հարստություն ստանալու համար քեզ ուժ տվողը, որ քո հայրերի հետ Իր երդումով արած ուխտը հաստատի, ինչպես որ այսօր» (Երկր. Օր. 8.18):

Մոռացել է Աստծո Խոսքը. «Եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում նրա շինողները: Եթե Տերը չպահպանի քաղաքը, զուր են անքուն մնում պահապանները» (Սաղմ. 127.1), և փորձել է իր իսկ ուժերով պահպանել ընտանիքը աղքատությունից:

Յուրաքանչյուր մարդ լույս աշխարհի է գալիս կոչումով: Եվ Աստված է որոշում նրա ով լինելը այս կյանքում: «Միթե կավի պես կհամարվի բրուտը, որ շենքը ասի իր շինողին. «Նա ինձ չի շինել», և արարածն ասի իր Արարչին, թե Նա չի հասկանում» (Եսայի 29.16): Մարդը պիտի ապաշխարի, որ չի խոնարհվել իրեն արարող Տիրոջ առջև և չի հարցրել Նրանից. «Տէր, ի՞նչ ես ուզում, որ անեմ, և ինչպե՞ս ես ուզում, որ դա անեմ»:

Դավիթը գիտեր, որ Աստծո ցանկությունն է կատարում՝ տեղափոխելով տապանակը, բայց նա Տիրոջը չհարցրեց, թե ինչպես իրականացնի տեղափոխությունը, այլ իրեն իրավունք վե-

րապահեց՝ որոշելու, թե ինչպես տեղափոխի այն, ինչ Աստծուն էր պատկանում: «Եվ Դավիթը խորհուրդ արեց բոլոր հազարապետերի ու հարյուրապետերի ու բոլոր իշխանների հետ: ...մեր Աստծո տապանակը մեզ մոտ փոխադրենք: ...Եվ Աստծո տապանակը դրին մի նոր սայլի վրա Աբինադաբի տնից, և Ոզան ու Աքիովը քշում էին սայլը...» (Ա Մսաց. 13.1-14): Ոզան իր ձեռքը մեկնեց, որ տապանակը բռնի, որովհետև եզները ծռել էին: Եվ Տիրոջ բարկությունը բորբոքվեց Ոզայի դեմ, և զարկեց նրան: Ոզայի մահը Դավթին սթափեցրեց. նա կանգ առավ: Եվ միայն որոշ ժամանակ անց՝ Աստծո կատարյալ կամքը իմանալուց հետո, նա Ուխտի տապանակը տեղափոխեց այնպես, ինչպես կարգն էր՝ Տիրոջ կամքի համաձայն. «Այն ժամանակ Դավիթն ասաց. «Ոչ ոք վեր չառնի Աստծո տապանակը՝ բացի ղևտացիներից, որովհետև Տերը նրանց ընտրեց, որ կրեն Աստծո տապանակը և Նրան ծառայեն հավիտյան»: ...Դավիթը նրանց ասաց. «Դուք եք ղևտացիների տոհմերի գլխավորները, սրբեք ձեր անձերը դուք և ձեր եղբայրները, որ Իսրայելի Տեր Աստծո տապանակը վեր տանեք նրա համար իմ պատրաստած տեղը: Որով-

հետև սկզբում ձեր չլինելու պատճառով մեր Տեր Աստվածը մեզ հարված տվեց, որովհետև Նրան չխնդրեցինք՝ ինչպես որ կարգն է»: ... և ղևտացիների որդիները վեր առան Աստծո տապանակը, ինչպես որ Մովսեսը Տիրոջ Խոսքի համեմատ հրամայել էր՝ իրենց ուսերի վրա, ճողերով նրանց վրա» (Ա Մնաց. 15.2-15):

Ցավոք սրտի, շատերը նույնիսկ վտանգ ապրելիս չեն սթափվում, չեն էլ հասկանում, որ պետք է կանգ առնել, վերանայել իրենց փոխհարաբերությունները տերերի Տիրոջ հետ: Յուրաքանչյուրը պիտի անհրաժեշտություն համարի՝ հարցնելու Տիրոջը. «Տեր, Դու ես արարել իմ ուկորները, իմ ոունգերում Քո շունչն է, ինչպիսին են Քո անուրջներն ու տեսիլները իմ կյանքի համար»:

Մարդու կյանքում շատ բան է կախված իր ճշմարիտ կոչման մեջ լինելուց: Երբ Աստծուց ավետարանչի կոչում ունեցողը հովիվ է դառնում, ոչ միայն եկեղեցին է տուժում, այլև հովիվ դարձած ավետարանիչը և նրա ընտանիքը: Երբ ուսուցչի կոչում ունեցողը դառնում է քաղաքական գործիչ կամ բիզնեսմեն, տուժում են ոչ միայն

բիզնեսմենը և նրա միջավայրը, այլև նրանք, ովքեր պիտի իրենց կյանքերը փոխող հայտնություններ ստանային այդ չկայացած ուսուցչից:

«Մեր մոլորակի ամենահարուստ տեղերը Քուվեյթի, Իրաքի կամ Սաուդյան Արաբիայի նավթի հանքաշերտերը չեն, Հյուսիսային Աֆրիկայի ոսկին և ադամանդները չեն, նախկին Խորհրդային Միության ուրանի հանքահորերը կամ Աֆրիկայի արծաթի հանքաշերտը չեն:

Հավանաբար, դուք կգարմանաք, բայց մեր մոլորակի ամենահարուստ հանքաշերտերը գերեզմանոցներում են: Հենց այնտեղ՝ հողի տակ, հավերժ թաքնված են չիրականացած երազանքները, չերգված երգերը, չգրված գրքերը, չիրագործված գաղափարները, տեսիլքները, նպատակներն ու ծրագրերը: Գերեզմանատները լցված են հսկայական ներուժով, որը այդպես էլ մնացել է լոկ ներուժ: Դա մեծ ողբերգություն է»*:

Մարդը կարիք ունի ապաշխարության նրա համար, որ անարգել է Գողգոթյան խաչը և Հիսուս Բրիստոսի արյան գորությունը. «Որովհետև գիտեք մեր Տեր Հիսուս Բրիստոսի շնորհքը, որ

* Մ. Մոնրո «Ճանաչելով քո ներուժը»:

ձեզ համար աղքատացավ Նա, որ հարուստ էր, որ դուք Նրա աղքատությունով հարստանաք» (Բ Կորնթ. 8.9), և թույլ է տվել, որ իրեն հասանելիք նյութական օրհնություններն օդում կախված մնան: Եվ ողբերգությունն այն է, որ իրեն թույլ չի տվել նույնիսկ օգտագործել հարուստ և բարգավաճում բառերը: Թե՛ քարոզների մեջ, թե՛ եկեղեցական միջավայրում անցկացվող զրույցներում ջանք չի խնայել՝ խուսափելու հարուստ կամ բարգավաճող քրիստոնյա արտահայտություններից: Մինչդեռ Աստվածաշունչն ամեն բան կոչում է իր իսկ անունով: Պետք է ապաշխարել այդ կրոնամոլության համար: Ինչն է մարդուն արգելում՝ արտաբերելու այդ բառերը: ՎԱՄԵԼ: Նա վախենում է, որ հանկարծ Աստծո ժողովուրդը չգնա հարստության, կռապաշտության ետևից և չթողնի իրեն արարող Աստծուն: Նա այստեղ կրկնակի պետք է ապաշխարի. նախ՝ որ Աստված մարդուն չի տվել վախի հոգի. «Որովհետև Աստված չի տվել մեզ վախի հոգի, այլ՝ զորության, սիրո և զգաստության», (Բ Տիմոթ. 1.7), և հետո՝ որ Աստծո Խոսքից խորությամբ ուսմունք չի ստացել Աստծո ճանապարհով հարստանալու մասին:

Մեր ստացած ուսմունքը և այդ ուսմունքին համապատասխան վարած կյանքը բավարարել են միայն սովին դիմակայելուն, կենցաղային կարիքները նվազագույն չափով ապահովելուն և կոմունալ վարձերը մասնակի վճարելուն: Ինչ խոսում ենք, այն էլ ստանում ենք:

Մարդը պիտի ապաշխարի, որ գոհաբերություն կատարելուց հետո ոչ միայն սպասելիք չի ունեցել, այլև սխալ խոսքեր է խոսել: Իր գոհաբերած սերմերը չի ջրել հավատքով լի դավանության խոսքերով: Ապաշխարի, որ Խոսքի ու դավանանքի զորությունն ուրացել է.

«Մարդու բերանի պտղից կկշտանա նրա փորը, նա կկշտանա իր շրթունքների արդյունքից: Մահն ու կյանքը լեզվի ձեռքին են, և նրան սիրողը կուտի նրա պտղից» (Առակ. 18. 20,21):

Խոսքի զորությունով են ստեղծվել երկիրն ու երկինքը, ամեն տեսանելին ու անտեսանելին, որոնց գոյության մասին նույնիսկ գաղափար չունենք:

Հավատքով հոչակված Խոսքի զորությունով թզենին չորացավ. «... Հիսուսը երբ ետ էր դառնում քաղաք՝ սովեց: Ճանապարհի վրա մի թզե-

նի տեսնելով՝ մոտեցավ, բայց նրա վրա մի բան չգտավ և նրան ասաց. «Այլևս քեզնից պտուղ չլինի հավիտյան», և թզենին իսկույն չորացավ» (Մատթ. 21.18-20):

Խոսքի գորությունով փոթորիկը դադարեց. «Քամու փոթորիկ սկսվեց ծովի մեջ, ավելոծությունը սաստկացավ, նավը լցվում էր, վտանգի մեջ էին: ... Նա էլ վեր կացավ ու քամուն և ջրի ավելոծությանը սաստեց: Եվ հանդարտվեցին, և խաղաղություն եղավ» (Ղուկ. 8.23,24):

Ինչպես արդեն ասվեց, մարդն ստեղծված է Աստծո պատկերով և նմանությամբ, իսկ Աստված ասում է. «Որովհետև՝ ինչպես որ իջնում են անձրևը և ձյունը երկնքից և ետ չեն դառնում այնտեղ, այլ ոռոգում են երկիրը և նրան արգասավոր անում և բողբոջեցնում նրան և տալիս են սերմ՝ սերմնացանին և հաց՝ ուտողին, այնպես էլ պիտի լինի Իմ բերանից դուրս եկած Խոսքը, այն չպիտի պարսպ վերադառնա Ինձ մոտ, այլ՝ կատարի Իմ ուզածը և հաջողվի նրանում, ինչի համար, որ նրան ուղարկեցի» (Եսայի 55.10,11): Մարդու շուրթերից դուրս եկած խոսքն էլ է գործողություն դառնում:

Երբ մարդն ապաշխարություն ապրի այս ամենի, ինչպես նաև այն մեղքերի համար, որ Սուրբ Հոգին իրեն կհիշեցնի ու կառաջնորդի, կարող է հոչակել իր կյանքի համար հետևյալ խոսքերը.

«Վե՛ր կաց, լուսավորվի՛ր, որովհետև լույսդ եկել է, և Տիրոջ փառքը ծագել է քեզ վրա: Որովհետև, ահա, խավարը ծածկել է երկիրը, և մառախուղն՝ ազգերը, բայց քեզ վրա ծագում է Տերը, և Նրա փառքը երևում է քեզ վրա» (Եսայի 60.1,2):

Մարդիկ կարող են աղոթել տերերի Տիրոջը, ու Նա կվերադարձնի կորցրածը, քանի որ Իր Խոսքում ասում է. «Եվ Ես կհատուցեմ ձեզ այն տարիները, որ կերան մորեխը, ջորյակը, երևիլը և խառնիճը: Այն Իմ մեծ գորքը, որ ուղարկեցի ձեր մեջ: Եվ պիտի ուտեք ու կշտանաք և օրհնաբանեք ձեր Տեր Աստծո անունը, որ ձեզ համար հրաշքներ արեց» (Հովել 2.25,26):

Պետք է աղոթել Հիսուս Քրիստոսով հավատացյալին տրված իշխանությամբ:

Ամերիկացի հայտնի քարոզիչ Քենեթ Հեգինը իր «Հավատացյալի իշխանությունը» գրքում

գրում է. «1952 թվականին Տեր Հիսուս Քրիստոսը երևաց ինձ տեսիլքով և մեկ ու կես ժամ խոսեց սատանայի, դևերի և դիվահարության մասին: Տեսիլքի վերջում մի չար ոգի, որ նման էր փոքր կապիկի կամ թզուկի, վազեց իմ և Հիսուսի մեջտեղով՝ տարածելով իր շուրջը ծխե մութ ամպ: Հետո վեր ու վար ցատկելով՝ բղավում էր ու սուր ճիչեր արձակում: Ես չէի կարողանում տեսնել Հիսուսին և հասկանալ, թե ինչ էր Նա ասում: (Ամբողջ այս ընթացքում Հիսուսն ինձ ինչ-որ բան էր սովորեցնում): Ես չէի կարողանում հասկանալ՝ ինչու էր Նա այդ դևին թույլ տալիս՝ նման անկարգություն անել, ինչու նրան չէր սաստում, որ ես կարողանայի լսել, թե ինչ էր Նա ասում: Ես սպասեցի մի քիչ, բայց Հիսուսն այդպես էլ ոչինչ չձեռնարկեց: Նա շարունակեց խոսել, բայց ես ոչինչ չկարողացա հասկանալ այն ամենից, ինչ Նա ասաց, իսկ ինձ դա պետք էր, որովհետև Նա խոսում էր սատանայի, դևերի մասին և ուսուցանում, թե ինչպես դրսևորել իշխանությունը: Ես մտածեցի. «Մի՞թե Տերը չգիտի, որ Իրեն չեմ լսում, որ կարիք ունեմ լսելու»: Ես գրեթե խու-

ճապի էի մատնվել: Հուսահատությունից սկսեցի բղավել. «Հիսուսի՛ անունով՝ ես հրամայում եմ քեզ, պի՛ղծ ոգի, դադարի՛ր»: Նույն վայրկյանին այդ փոքրիկ դևն աղով լցված պարկի պես ընկավ հատակին, և սև ամպն անհետացավ: Դևը դողում էր ու ծեծված շան ձագի նման վնաստում: Նա չէր նայում ինձ: «Ոչ միայն պապանձվի՛ր, այլ նաև հեռացի՛ր այստեղից, Հիսուսի՛ անունով», - հրամայեցի ես, ու նա փախավ»:

Հեգիներ գրում է, որ ինքը շատ զարմացած էր, թե ինչու Հիսուսը ոչինչ չէր ձեռնարկում սատանային հեռացնելու համար: Այնուհետև Հիսուս Փրկիչը Խոսքով բացատրում է պատճառը: Նա ասում է, որ Ինքը ոչ թե չէր ուզում օգնել Հեգինին, այլ՝ չէր կարող: Համաձայն Նոր կտակարանի՝ Նա այդ իշխանությունն արդեն տվել է եկեղեցուն: Հիսուսը եկեղեցու գլուխն է, եկեղեցին մարմինն է: Գլուխը գործում է մարմնի միջոցով: Հիսուսը Հեգինին բացատրում է. «Նոր կտակարանում եկեղեցին ոչ մի անգամ չի աղոթել, որ Հայրը կամ Հիսուսը սատանայի դեմ որևէ բան ձեռնարկեն: Դա ընդամենը ժամանակի կորուստ կլիներ:

Հավատացյալն ինքը ինչ-որ բան պիտի անի սատանային սաստելու համար. եկեղեցին պիտի օգտագործի իր իշխանությունը: ...Մինչև հավատացյալներն իրենց իշխանությունը չօգտագործեն սատանայի դեմ, ոչինչ էլ տեղի չի ունենա»*:

Այնպես որ, բոլոր այն աղոթքները, որոնք մարդուկ արել են՝ խնդրելով Հայր Աստծուն կամ Հիսուս Քրիստոսին՝ բժշկելու, փրկելու, ֆինանսական կամ ցանկացած խնդիր լուծելու համար, ապարդյուն են: Այդ բոլորն անպատասխան են, քանի որ Հայր Աստված կամ Հիսուսը ոչ թե չեն ուզում, այլ չեն կարող որևէ բան ձեռնարկել: «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ Խոսքերը չեն անցնի» (Մարկ. 13.31): Համաձայն Խոսքի՝ Հիսուսը Հոր կամքով այդ իշխանությունը տվել է Իրեն հավատացողներին. «Ահա ձեզ իշխանություն եմ տալիս կոխել օձերի և կարիճների վրա և թշամու ամբողջ գործության վրա, և ձեզ ոչինչ չի վնասի» (Լուկ. 10.19): Պետրոսի առաջին թղթի 5.8,9-ում ասվում է. «Արթուն եղեք ու հսկեք, որովհետև ձեր ոտիս թշնամին՝ սատանան, գոռոզ առյուծի նման ման է գալիս և որոնում է, թե որին

* Ք. Հեգին «Հավատացյալի իշխանությունը»:

կուլ տա: Նրան հակառակ կանգնեք՝ հավատքով հաստատված, իմացեք, որ ձեր եղբայրներն էլ, որ աշխարհում են, նույն չարչարանքներն են քաշում»:

Ուշադրություն դարձնենք, որ համաձայն Խոսքի՝ սատանան լոկ թշնամի չէ, այլ՝ ոսոխ թշնամի: Սա նշանակում է, որ նա կցանկանա յուրաքանչյուր մարդու անխնա տանջել ու ոչնչացնել: Մարդն ինքը պետք է արթուն լինի, ինքը պետք է հսկի, ինքը պետք է հակառակ կանգնի սատանային, ինքը պետք է հավատքով հաստատված լինի, որ սատանան պարտված, նպատակին չհասած՝ փախչի: Մարդիկ չեն կարող խնդրել Հիսուսին. «Տեր, փրկիր: Տեր, ողորմիր...», եթե Հիսուսի անունով չեն հրամայել սատանային, որ փախչի: Իհարկե, մեր Տերը փրկում է, մեր Տերը ողորմում է, բայց որքան էլ Նա մարդուն սիրի, ոչինչ չի կարող անել, քանի որ Իր Խոսքում ասում է. «Իմ անունով ինչ որ խնդրեք, պետք է կատարեմ, որպեսզի Հայրը Որդու միջոցով փառավորվի: Եթե Իմ անունով մի բան խնդրեք, այն պետք է կատարեմ» (Հովհ. 14.13,14):

Հունարենում «խնդրել» բառի փոխարեն գրված է «պահանջել»: Գործք. 3.6-ում Պետրոսը Հիսուս Քրիստոսի անունով պահանջում է ի ծնե կաղի բժշկությունը:

Մարդիկ պիտի լավ հասկանան, որ ոչ թե Աստուծոց են պահանջում, այլ՝ սատանայից, քանի որ Հիսուս Փրկիչը Գողգոթյան խաչի զորությունով, Իր թափած արյան գնով արդեն ամեն բան տվել է Իրեն Տեր և Փրկիչ ընդունածներին: Քրիստոսի խաչի զորությանը հավատացողները պարզապես օգտագործում են իրենց իրավունքը:

Հովհաննես 16.23,24-ում ասվում է. «Եվ այն օրը ոչինչ չեք հարցնի Ինձ: Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ինչ-որ Հորից խնդրեք Իմ անունով, կտա ձեզ: Մինչև հիմա ոչինչ չխնդրեցիք Իմ անունով, խնդրե՛ք և կառնե՛ք, որ ձեր ուրախությունը կատարյալ լինի», հունարենում գրված է. «Ինչ որ պահանջե՛ք որպես ձեր իրավունք և արտոնություն...»:

Յուրաքանչյուր հավատացյալ պիտի ճանաչի իր իրավունքները և օգտագործի Հիսուս Քրիստոսով իրեն վստահված իշխանությունը սատանայի դեմ: Սատանան միշտ է մեզ խանգարում՝

ստանալու այն ամենը, ինչ Հիսուսը պարզևել է մարդկությանը Իր արյան գնով, Գողգոթյան խաչի գործությունով:

Որոշ քրիստոնյաներ խուսափում են նույնիսկ սատանայի անունը տալուց, կարծես նա չկա: Սա մոլորություն է: Սատանան ոչ միայն կա, այլև այս աշխարհի իշխանն է. «Այլևս շատ չեմ խոսի ձեզ հետ, որովհետև այս աշխարհի իշխանը գալիս է և Իմ մեջ ոչինչ չունի» (Հովհ. 14.30): Յուրաքանչյուրը պիտի գիտակցի, խորությամբ ճանաչի ճշմարտությունը և ոչ թե սատանայից վախենա, այլ Հիսուս Քրիստոսով նրա ծրագրերը խորտակի և նրա գործողությունները քանդի: «Այսուհետև, եղբայրներ, զորացե՛ք Տերով և Նրա գործության կարողությունով: Եվ Աստծո սպառազինությունը հագե՛ք, որ կարողանաք սատանայի հնարքներին հակառակ կանգնել: Որովհետև մեր պատերազմը արյան ու մարմնի դեմ չէ, այլ՝ իշխանությունների ու պետությունների դեմ, այս աշխարհի խավար աշխարհակալների դեմ, այն չար հոգիների դեմ, որ երկնավորների մեջ են: Մրա համար Աստծո սպառազինությունը առե՛ք, որ կարողանաք հակառակ կանգնել չարության

օրում, և ամենը կատարելով՝ հաստատ կանգնել»
(Եփես. 6. 10-13):

Եթե քրիստոնյան չի օգտագործում Հիսուս Քրիստոսով իրեն տրված իշխանությունը, դրանով անարգում է խաչի զորությունը և չի օգտվում Հիսուսի արյան գնով իրեն տրվածից: Նա պիտի ոչ միայն օգտագործի Հիսուս Քրիստոսով իրեն տրված իշխանությունը դիվային ուժերի նկատմամբ, այլև ճանաչի Հիսուս Քրիստոսի անվան հեղինակությունը: Պիտի խորությամբ հասկանա, որ սատանայի նկատմամբ իշխանությունը գործում է միմիայն Հիսուս Քրիստոսի անվան շնորհիվ. «Ամեն իշխանություն Ինձ տրվեց երկնքում և երկրում» (Մատթ. 28.18):

Հիսուս՝ նշանակում է Փրկիչ: Փրկվել՝ չի նշանակում միայն վերստին ծնունդ ստանալ՝ մահից հետո հավիտենական կյանքը Հիսուսի հետ անցկացնելու համար: Հիսուս՝ Փրկիչ, նշանակում է փրկություն ամեն տեսակի անեծքներից, վախերից, հիվանդություններից, աղքատությունից ու ամեն բացասականից: «Եվ նրանց ասաց. «Գնացեք ամբողջ աշխարհով և Ավետարանը քարոզեք ամեն արարածի: Ով հավատաց և

մկրտվեց՝ կփրկվի, և ով չհավատաց՝ կդատապարտվի: Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն՝ **Իմ անունով** դևեր կհանեն, նոր լեզուներով կխոսեն, օձեր վեր կառնեն և եթե մի մահադեղ էլ խմեն, նրանց վնաս չի տա, հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան» (Մարկ. 16.15-18):

Հիսուս Քրիստոսի անունն է կանգնած հրաշքի հիմքում: Սակայն Հիսուս Քրիստոս անունը պարզապես արտասանելը մարդուն ոչինչ չի տա, եթե նա խորությամբ չգիտակցի, որ պիտի ամբողջությամբ վստահի այդ անունը կրողի ամենակարողությանը: Տերերի Տերը հրաշքը կատարում է ՀԱՆՈՒՆ այդ ԱՆՎԱՆ: Ինչո՞ւ: Խոսքն է այդպես ասում. «Եվ այն օրը ոչինչ չեք հարցնի Ինձ: Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե՛ ինչ որ Հորից խնդրեք Իմ անունով՝ կտա ձեզ: Մինչև հիմա ոչինչ չխնդրեցիք Իմ անունով: Խնդրե՛ք և կառնեք, որ ձեր ուրախությունը կատարյալ լինի» (Հովհ. 16.23,24):

Հիսուս Քրիստոսի անվան հեղինակությունից և հավատացյալի իշխանությունից կարող է օգտվել միմիայն այն մարդը, ով Հիսուս Քրիստոս-

սին ընդունել է իր կյանքի միակ Տեր և Փրկիչ, ով ապաշխարել է իր՝ գիտակցաբար և անգիտակցաբար գործած բոլոր մեղքերի համար, հակառակ դեպքում սատանան չի ենթարկվի նրան և կշարունակի ավերել նրա կյանքը:

Գործք առաքելոցի 19.13-16-ում գրված է, որ Սկևայի որդիները, տեսնելով Հիսուսի և Նրա աշակերտների կատարած հրաշքները, փորձեցին իրենք էլ Հիսուսի անունն օգտագործել: Նրանք չէին ուզում հետևել Հիսուսին, աշակերտների հետ տարածել Աստծո արքայությունը, պարզապես իրենց շահն էին փնտրում. «Եվ թափառական հրեաներից ոմանք համարձակվեցին Տեր Հիսուսի անունը կանչել չար ոգիներ ունեցողների վրա: Երդում ենք տալիս ձեզ այն Հիսուսի անունով, որ Պողոսը քարոզում է: Հրեա քահանայապետ Սկևայի յոթ որդիներն էին, որ այդպես էին ասում: Չար ոգին պատասխանեց. «Հիսուսին գիտեմ, Պողոսին ճանաչում եմ, բայց դո՞ւք ով եք»: Եվ այն մարդը, որի մեջ չար ոգի կար, հարձակվելով նրանց վրա, բռնեց, նրանց ծեծեց այնքան, մինչև որ Սկևայի որդիները մերկ ու խոցված այդ տնից փախան»:

Հիսուս Քրիստոսի անունը իշխանություն ունի ամեն-ամեն ինչի վրա՝ քանդելու սատանայի գործերը և կատարելու Աստծո կամքը:

«Բայց նա հափշտակված և կողոպտված ժողովուրդ է: Նրանք՝ ամենքը, որոգայթի մեջ են ընկած՝ փոսերում, և կալանքի տներում թաքնված են: Նրանց հափշտակեցին, և ազատող չկա, կողոպտվեցին, և ասող չկա. «ԵՏ ՏՈՒՐ» (Եսայի 42.22):

Անհրաժեշտ է ասել. «Ետ տուր: Սատանա՛, Հիսուս Քրիստոսի անունով հրամայում եմ քեզ՝ ետ տուր այն ամենը, ինչ Հիսուս Քրիստոսի Գողգոթյան խաչի գորությունով ինձ է պատկանում: Հիսուս Քրիստոսի անունով՝ ես պահանջում եմ քեզնից վերադարձնել իմ... (յուրաքանչյուրը կարող է թվարկել այն ամենը, ինչ սատանան գողացել է իրենից՝ լինեն ֆինանսներ, տուն, երջանկություն, ամեն-ամեն ինչ)»: Նա պիտի գիտակցի, որ իր դժբախտությունների արմատը թաքնված է իր բնավորության, Աստծո Խոսքը չիմանալու, ինչպես նաև սատանայի բնավորության մեջ, քանի որ գրված է. «...գողը (սատանան) գալիս է միայն, որ գողանա և սպանի և կորցնի» (Հովհ. 10.10):

Յուրաքանչյուրը կարիք ունի հիշելու, որ մինչև այս աղոթքը անհրաժեշտ է ապաշխարել. ապաշխարել այն ամենի համար, ինչին անդրադարձ եղավ վերոնշյալ հատվածներում:

Թ՛ող Աստծո սերը, Հիսուս Քրիստոսի շնորհքը, Սուրբ Հոգու հաղորդությունը միշտ ձեզ հետ լինեն:



ԳԱՅԱՆԵ ԶԱԿՈՐՅԱՆԸ այս գրքում խոսում է այն վերաբերմունքի մասին, որն ունի Աստված մարդու ֆինանսական օրհնության բնագավառի վերաբերյալ և ցույց է տալիս օրհնության այդ բնագավառ մտնելու աստվածաշնչյան բանալիները:

Գայանե Զակորյանի և նրա ծառայության մասին ավելին
իմանալու համար այցելեք՝ gayanehakobyan.org